Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
ապրիլի 26-ի N 536 - Ա որոշման

«Դ-ԼԻՆԿ ԻՆՏԵՐՆԵԾՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

1. Նախաբան

«Դ-ԼԻՆԿ ԻՆՏԵՐՆԵԾՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» ընկերությունը ցանցային և հեռահաղորդակցության սարքավորումների մշակման և արտադրության մեջ մասնագիտացված համաշխարհային առաջատարներից է: «Դ-ԼԻՆԿ ԻՆՏԵՐՆԵԾՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» ընկերության 127 տարածաշրջանային գրասենյակներն իրականացնում են սարքավորումների վաճառք և սպասարկում ավելի քան 100 երկրներում՝ դարձնելով այս ընկերությունը վաճառքի ծավալներով առաջատար համանման ընկերությունների շարքում:

«Դ-ԼԻՆԿ ԻՆՏԵՐՆԵԾՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» ընկերության կողմից Հայաստանի ընտրությունը՝ որպես տարածաշրջանային կենտրոն, պայմանավորված է այս երկրի՝ տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում ունեցած մեծ ներուժով, ինչպես նաև վերջին տարիների ընթացքում գրանցված հաջողություններով: Գյումրիում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների առկա ենթակառուցվածքները և Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրերը, ուղղված Շիրակի մարզում այս ոլորտի զարգացմանը, ապահովում են անհրաժեշտ պայմաններ «Դ-ԼԻՆԿ ԻՆՏԵՐՆԵԾՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» ընկերության տարածաշրջանային խոշոր հետազոտական կենտրոնի հիմնադրման համար: Կենտրոնի հիմնադրման ներդրումային ծրագիրը նախատեսված է առնվազն 25 տարվա համար: Այսպիսի կենտրոնի ներկայությունը Գյումրիում կնպաստի Գյումրի քաղաքի և Շիրակի մարզի տնտեսական զարգացմանը՝ խթանելով օտարերկրյա ներդրումների և արտահանման աճին, ստեղծելով

բարձր վարձատրվող աշխատատեղեր: Գյումրիում «Դ-ԼԻՆԿ ԻՆՏԵՐՆԵԾՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» ընկերությունն իր գործունեությունն սկսել է 2011 թվականի հուլիսից, և ընկերության հիմնադրած կենտրոնում աշխատում են 8 վերապատրաստված մասնագետներ:

2. Ծրագրի նկարագրությունը

Սույն ներդրումային ծրագրով նախատեսվում է ստեղծել «Դ-ԼԻՆԿ ԻՆՏԵՐՆԵԾՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» ընկերության հետազոտությունների և թեստավորման կենտրոն Գյումրիում: Կենտրոնը զբաղվելու է մասնագիտական կարողությունների զարգացմամբ և հետազոտությունների իրականացմամբ ցանցային և հեռահաղորդակցության ոլորտներում:

«Դ-Լինկ» հետազոտությունների կենտրոնը Գյումրիում հագեցված է լինելու ժամանակակից սարքավորումներով և հնարավորություն է տալու մշակել և թեստավորել ցանցային և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտներում միջազգային շուկայի պահանջներին համապատասխան նորարարական արտադրանք: Հետազոտությունների հիմնական ուղղությունները կլինեն «Դ-Լինկ» «ամպային» կառուցվածքով հաշվողական համակարգերը և կառավարման ծրագրային ապահովումները: Հետազոտական աշխատանքները կարտահանվեն և կվաճառվեն միջազգային շուկաներում:

Կենտրոնի կրթական ծրագրերն իրականացվելու են Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի հետ համատեղ և ներառելու են դասընթացներ հետևյալ ուղղություններով՝

- Անդրոիդ օպերացիոն համակարգ.
- Լինուքս օպերացիոն համակարգ.
- «Դ-Լինկ» «ամպային» կառուցվածքով հաշվողական համակարգեր (cloud computing):

Կենտրոնը կգործի 2013 թվականի հունիսից: Ծրագրի արժեքը կազմում է 8.5 մլն ԱՄՆ-ի դոլար, որից՝ 1 մլն ԱՄՆ-ի դոլարը կտրամադրվի թեստավորման լաբորատորիայի հիմնա-

դրմանը: «Դ-ԼԻՆԿ ԻՆՏԵՐՆԵԾՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» ընկերությունը հանձնվող տարածքում կկառուցվի նոր մասնաշենք՝ «Դ-Լինկ» հետազոտությունների կենտրոնի գործունեությունն ապահովելու նպատակով: Կենտրոնի տարածքը կազմելու է 870 քառ. մետր, որը ներառելու է 2 լսարան, թեստավորման և հետազոտությունների սենյակներ և հանդիպումների սենյակ:

3. Ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացման առաջին տարվա համար ակնկալվող արդյունքներն են՝

- մինչև 50 աշխատատեղերի ստեղծում, այդ թվում՝ 35-40 ինժեներ-ծրագրավորող.
- օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանում Շիրակի մարզում.
- տարածաշրջանում իր բնույթով և ծավալներով եզակի կենտրոնի հիմնադրում Գյումրիում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
ապրիլի 26-ի N 536 - Ա որոշման

Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «Դ-ԼԻՆԿ ԻՆՏԵՐՆԵՇՆԼ» ՊՏԵ ԼՏԴ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

քաղ. Երևան -------- ---------- 2012 թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս Հայաստանի Հանրապետության նախարար Տիգրան Դավթյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, «Դ-Լինկ Ինտերնեշնլ ՊՏԵ ԼՏԴ» ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն), ի դեմս----------, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ վերը նշված բոլոր կողմերը միասին՝ կողմեր կամ առանձին՝ կողմ):

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների զարգացման ուղղությամբ նախարարության կողմից տարվող աշխատանքները և նկատի ունենալով ընկերության հետազոտությունների և մշակման իրականացման մեծ փորձն ու միջազգային հեղինակությունը ցանցային և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում՝ կողմերը կնքեցին սույն համագործակցության մասին հուշագիրը (այսուհետ՝ հուշագիր) հետևյալի մասին՝

1. Կողմերը կաջակցեն «Դ-Լինկ» հետազոտությունների և մշակման կենտրոնի հիմնմանը (այսուհետ՝ կենտրոն) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում:

2. Նախարարությունը կենտրոնի հիմնադրման ներդրումային ծրագրի իրականացման համար ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով կտրամադրի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հակոբյան փողոցի N 39 հասցեում գտնվող մարզադահլիճը՝ 978.90 քառ. մետր մակերեսով և սպասարկման համար անհրաժեշտ 0.107748 հեկտար հողամասը:

3. Ընկերությունը կապահովի կենտրոնի շենքի կառուցումը և արդյունավետ գործունեությունը՝ տրամադրելով ժամանակակից սարքավորումներ, վերապատրաստելով տեղական մասնագետներին և օգտագործելով հրավիրված միջազգային մասնագետների փորձը:

4. Ընկերությունը, համագործակցելով նախարարության հետ, ուսումնական և հետազոտական ծրագրերում, կապահովի կենտրոնի փոխգործակցությունը Գյումրու տեխնոպարկի հետ և կդարձնի այն Գյումրու տեխնոպարկի անբաժանելի մասը:

5. Կողմերը կհամագործակցեն տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում իրականացվող միջոցառումներին համապատասխան կառույցների և ոլորտի ընկերությունների փոխադարձ իրազեկության և մասնակցության ապահովման հարցերում:

6. Սույն հուշագրի կնքման և կատարման հետ կապված կողմերի փոխհարաբերությունները բնութագրվում են միմյանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ վստահությամբ:

7. Սույն հուշագրի փոփոխություններն ու լրացումները կարող են կատարվել բացառապես կողմերի գրավոր համաձայնությամբ, որը կհանդիսանա սույն հուշագրի անբաժանելի մասը:

8. Կողմերը հաստատում են, որ սույն հուշագրի կնքումը և կատարումը լիովին բխում և համապատասխանում է իրենց շահերին:

9. Կողմերը հավաստում են, որ սույն հուշագրի կնքման պահին նրանց հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով իրենք իրավասու կամ ի վիճակի չեն կնքել կամ կատարել սույն հուշագիրը:

10. Սույն հուշագիրը բաղկացած է 2 էջից, կազմված է հայերենով և կնքվում է 2 հավասարազոր օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

11. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրման պահից:

Կողմերի ստորագրությունները

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Տիգրան Դավթյան ----------

«Դ-Լինկ Ինտերնեշնլ» ՊՏԵ ԼՏԴ» ընկերություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ